ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԱՆԴՇԱՖՏԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԶԵԿՈՒՅՑ

1. Լանդշաֆտի Եվրոպական կոնվենցիայի իրագործման ուղղությամբ 2015 թվականի ընթացքում ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից իրականացվել են հետևյալ միջոցառումները.

- ՀՀ համայնքների գլխավոր հատակագծերի և գոտիավորման նախագծերի մշակման աշխատանքների համակարգման շրջանակներում (Լանդշաֆտային ռազմավարության իրագործմանն ուղղված միջոցառումների ցանկի կետ 1.5) Լանդշաֆտի Եվրոպական կոնվենցիայի դրույթներից բխող պահանջներն՝ գլխավոր հատակագծով նախատեսված բնական լանդշաֆտի պահպանման գոտիների վիճակի բարելավման և բարեկարգման աշխատանքներն ամրագրվել են ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի նոր գլխավոր հատակագծի մշակման նպատակով կազմված՝ Դիլիջան քաղաքի զարգացման հայեցակարգում, Դիլիջան քաղաքում քաղաքաշինական հատուկ կարգավորման գոտու առանձնացման և դրանում մանրամասն գոտևորման նախագծի մշակման առաջադրանքում, ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ, ՀՀ Արարատի մարզի Արտաշատ, Մասիս, ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդ, Հրազդան, ՀՀ Սյունիքի մարզի Կապան, Գորիս, Մեղրի, Սիսիան, ՀՀ Լոռու մարզի Թումանյան, Ստեփանավան քաղաքային համայնքների գլխավոր հատակագծերի փոփոխությունների և ՀՀ Տավուշի մարզի Հաղարծին գյուղական համայնքի պարզեցված գլխավոր հատակագծի փոփոխության առաջարկություններում, ինչպես նաև ՀՀ Արարատի մարզի Սայաթ-Նովա, Ջրաշեն, Ավշար, Մրգավան, Քաղցրաշեն, Բերքանուշ, ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձոր, ՀՀ Գեղարքունիքի մարզի Լճափ, Նորաշեն, Երանոս, ՀՀ Լոռու մարզի Լեռնանցք գյուղական համայնքների պարզեցված գլխավոր հատակագծերում:

- Լանդշաֆտի Եվրոպական կոնվենցիայի Հայաստանում իրագործման գործընթացի վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնելու նպատակով ՀՀ քաղաքաշինության նախարարի 2015 թվականի մայիսի 20-ի N116 հրամանով հաստատված ժամանակացույցի համաձայն 2015 թվականի մայիսի 22-ից հուլիսի 30-ը ընկած ժամանակահատվածում սեմինարներ են անցկացվել ՀՀ Շիրակի մարզի Գյումրի, ՀՀ Լոռու մարզի Վանաձոր, ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ, ՀՀ Տավուշի մարզի Իջևան, ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր, ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ և ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան քաղաքներում:

2. ՀՀ մշակույթի նախարարության կողմից իրականացվել են հետևալ միջոցառումները.

- Լանդշաֆտային ռազմավարության իրագործմանն ուղղված միջոցառումների ցանկի 2.1 կետի կատարման շրջանակներում՝ 2014 թվականին կազմվել են թվով 200 պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանական գոտիների նախագծեր, 2014 թվականին և 2015 թվականի առաջին կիսամյակում համաձայնեցվել և հաստատվել են թվով 91 պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանական գոտիների նախագծեր, որոնցից՝ ՀՀ Արագածոտնի մարզ՝ 9, ՀՀ Գեղարքունիքի մարզ՝ 1, ՀՀ Կոտայքի մարզ՝ 10, ՀՀ Լոռու մարզ՝ 36, ՀՀ Սյունիքի մարզ՝ 26, ՀՀ Տավուշի մարզ՝ 5, ՀՀ Վայոց ձորի մարզ՝ 4 նախագիծ:

- 2.2 կետի առնչությամբ՝ 2014-2015 թվականների ընթացքում վերականգնման աշխատանքներ են իրականացվել թվով 14 հուշարձաններում՝ ՀՀ Արագածոտնի մարզի

Ոսկեվազի Սբ. Հովհաննես և Իրինդի Սբ. Աստվածածին եկեղեցիներ, ՀՀ Արմավիրի մարզի Այգեշատի Թարգմանչաց եկեղեցի, ՀՀ Արարատի մարզի Դվինի հնավայր, ՀՀ Լոռու մարզի Քոբերի Քոբայրավանք, Սանահին վանական համալիր, Լոռի բերդ ամրոց, ՀՀ Կոտայքի մարզի Կամարիսի Սբ. Հովհաննես եկեղեցի, Բջնի ամրոց, Գեղարդավանք, ՀՀ Սյունիքի մարզի Վաղուտինի Որոտնավանք, Տեղի Սբ. Գևորգ եկեղեցի, ՀՀ Տավուշի մարզի Գոշավանքի Սբ. Աստվածածին եկեղեցի և Մխիթար Գոշի դամբարան: Միաժամանակ ՀՀ մշակույթի նախարարությունը նշում է, որ պատմամշակութային հուշարձանների պահպանական գոտիների նախագծերի կազմման շրջանակներում ներառում է (ըստ անհրաժեշտության) նաև հուշարձաններին հարակից բնապատմական լանդշաֆտը:

3. Համաձայն ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության, նախարարությունն իր իրավասությունների շրջանակներում մասնակցում է ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգի պահանջներին համաձայն (միջոցառումների ցանկով ամրագրված 1.5 կետ) համայնքների գլխավոր հատակագծերի և գոտիավորման նախագծերի մշակման աշխատանքների համակարգմանը, ինչպես նաև աջակցում է ՀՀ համայնքներում հուշարձանների վերականգնման և տարածքների բարեկարգմանն ուղղված միջոցառումների իրականացմանը (կետ 2.2), համագործակցում և մասնակցում է լիազոր գերատեսչությունների, տեղական և միջազգային կազմակերպությունների հետ՝ նրանց կողմից հուշարձանների տարածքների բարեկարգման, բնակավայրերի դեգրադացված տարածքների վերակառուցման ու բարեկարգման նպատակով մշակվող և իրականացվող ծրագրերին (կետ 2.3):

4. Լանդշաֆտային ռազմավարության իրագործմանն ուղղված միջոցառումների 2.1 կետի կատարման շրջանակներում ՀՀ բնապահպանության նախարարի 2014 թվականի օգոստոսի 5-ի N 218-Ն, N 219-Ն և N 220-Ն հրամաններով հաստատվել են ՀՀ Լոռու մարզում՝ 8, ՀՀ Վայոց Ձորի մարզում՝ 4 և ՀՀ Տավուշի մարզում՝ 15 բնության հուշարձանների անձնագրեր՝ ընդամենը 27: ՀՀ բնապահպանության նախարարի 2015 թվականի սեպտեմբերի 29-ի N 276-Ն հրամանով ՀՀ Սյունիքի մարզում հաստատվել է «Սատանի կամուրջ» բնական կամուրջ բնության հուշարձանի անձնագիրը: Ներկայումս բնության հուշարձաններից 106-ը հանդիսանում են երկրաբանական, 48-ը՝ ջրաերկրաբանական, 40-ը՝ ջրագրական, 17-ը՝ բնապատմական և 21-ը՝ կենսաբանական:

5. ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության տեղեկատվությամբ, լանդշաֆտային ռազմավարության իրագործմանն ուղղված միջոցառումների շրջանակներում, Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային Ծրագրի իրականացման նպատակով կնքված վարկային համաձայնագրերի պահանջների համաձայն, յուրաքանչյուր ենթածրագրի համար իրականացվել է Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում (ՇՄԱԳ), որը բացահայտում է ճանապարհի շինարարության հետևանքով շրջակա միջավայրի և ազդակիր համայնքների վրա ազդեցության վտանգավորության աստիճանն ու ինտենսիվությունը, ինչպես նաև կազմվել են Բնապահպանական կառավարման պլաններ, որոնք նկարագրում են շինարարության հետևանքով շրջակա միջավայրի, հնագիտական, բնական և պատմամշակութային հուշարձանների վրա բացասական ազդեցության կանխարգելման ու մեղման միջոցառումները և այդ միջոցառումների իրականացման մոնիթորինգն ու

վերահսկումը: ՇՄԱԳ հաշվետվությունները ներկայացվել են ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ի փորձաքննությանը և ստացել են դրական եզրակացություններ:

6. Լանդշաֆտային ռազմավարության իրագործմանն ուղղված կրթության ոլորտի միջոցառումների կատարման ուղղությամբ ձեռնարկվել են հետևյալ գործողությունները.

- մշակվել է «Աշխարհագրություն» մասնագիտության պետական կրթական չափորոշիչը, որի հիմնական ուսուցման դասընթացներից է «Լանդշաֆտագիտությունը»: Այդ մասնագիտության շրջանակներում պատրաստվում են նաև մասնագետներ՝ լանդշաֆտի գնահատման և այլ գործառույթներով զբաղվելու համար:

- Երևանի պետական համալսարանի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի բակալավրիատում և մագիստրատուրայում դասավանդվում են «Լանդշաֆտագիտություն», «Լանդշաֆտային պլանավորում», «Լանդշաֆտային էկոլոգիա», Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանում՝ «Լանդշաֆտային ճարտարապետություն», «Կայուն քաղաքաշինություն», «Քաղաքաշինություն և էկոլոգիա» և «Ճարտարապետական նախագծման էկոլոգիական հիմունքներ» առարկաները: Ուսումնական ծրագրերում, առարկայական պլաններում լանդշաֆտային պլանավորման մեթոդաբանական ապահովումը հիմնված է ականավոր լանդշաֆտագետների աշխատությունների վրա, որոնք համահունչ են «Լանդշաֆտի Եվրոպական Կոնվենցիայի» պահանջներին:

- Ջերմուկում տարեկան երկու անգամ՝ ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի մասնակցությամբ, անցկացվում են գիտաժողովներ՝ նվիրված լանդշաֆտային ճարտարապետությանը:

7. Համաձայն ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության, նախարարությունն իր իրավասությունների շրջանակներում իրականացրել է հետևյալ աշխատանքները.

- Անասնապահական ուղղվածություն ունեցող բարձր լեռնային և սահմանամերձ համայնքների բնական արոտների անցանելիության ապահովման, ջրարբիացման, դեգրադացված արոտների վերականգնման նպատակով 2011 թվականի երկրորդ կիսամյակից մեկնարկել է «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» Համաշխարհային բանկի աջակցությամբ իրակա-նացվող վարկային ծրագիրը: Ծրագիրն իրականացվում է հանրապետության անասնապահությամբ մասնագիտացված ՀՀ Արագածոտնի, ՀՀ Լոռու, ՀՀ Շիրակի, ՀՀ Տավուշի, ՀՀ Գեղարքունիքի և ՀՀ Սյունիքի մարզերում: Ծրագրի շրջանակներում նախատեսված 55 համայնքի փոխարեն, տնտեսված միջոցների ներգրավմամբ, աշխատանքներ են իրականացվել 91 համայնքում: Ծրագրի իրականացման արդյունքում բարելավվել են շուրջ 240.0 հազ. հա արոտներ (հանրապետության արոտների 23 %-ը):

- Մեկնարկել է «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» երկրորդ ծրագիրը, որը նախատեսվում է ավարտել 2019 թվականին: Ծրագրի շրջանակներում համայնքների արոտավայրերի և անասնապահության բաղադրիչով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության 8 մարզերում՝ ՀՀ Արագածոտնի, ՀՀ Գեղարքունիքի, ՀՀ Լոռի, ՀՀ Կոտայքի, ՀՀ Շիրակի, ՀՀ Սյունիքի, ՀՀ Վայոց Ձորի, ՀՀ Տավուշի և շուրջ 100 համայնքներում իրականացնել անասնապահության զարգացմանն ուղղված ծրագրեր: Մասնավորապես, ի թիվս այլ միջոցառումների՝ ըստ համայնքների անհրաժեշտության արոտավայրերում կառուցել ջրարբիացման համակարգեր (ըստ նախնական հաշվարկի ջրարբիացնել շուրջ 160 հազ.

հա արոտներ, կառուցել 240 կմ ջրագիծ, տեղակայել 290 խմոց), աջակցել կոոպերատիվներին տոհմային աշխատանքների բարելավման գործում, բարելավել արոտավայրեր տանող ճանապարհները՝ հասանելիությունը ապահովելու նպատակով: Նշված միջոցառումների իրականացումը կնպաստի արոտների բարելավմանը, գերարածեցման և էրոզիոն երևույթների կախնմանը:

- Անտառների բարելավմանն ուղղված միջոցառոջմների շրջանակներում ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից 2011-2015 թվականներին ՀՀ 8 մարզերում՝ ՀՀ Արագածոտնի, ՀՀ Գեղարքունիքի, ՀՀ Լոռի, ՀՀ Կոտայքի, ՀՀ Շիրակի, ՀՀ Սյունիքի, ՀՀ Վայոց Ձորի, ՀՀ Տավուշի և Երևանում իրականացվել են անտառների տնկման և ցանքսի աշխատանքները 532.4 հա տարածքների վրա:

- Սելավային երևույթների բացասական ազդեցության կանխարգելման, գետերի ջրերի վնասակար ներգործության կանխման և վերացմանն ուղղված միջոցառումների շրջանակներում կազմակերպվում ու իրականացվում են հանրապետության տարածքում գետերի և հեղեղատարների հուների մաքրման և ափերի ամրացման աշխատանքները: Մասնավորապես, 2011-2013 թվականներին հակահեղեղային միջոցառումներ են իրականացվել (հուների մաքրում, ափերի ամրացում, արգելաթմբերի վերականգնում) Արաքս, Աղստև, Ազատ, Մեծամոր, Գեղարքունիք, Մարտունի, Արգիճի, Ձորագետ, Կավարտ, Արփա գետերի, Մեծամորի, Խանջյանի, Բռնակոթի, Վերիշենի հեղեղատարների հեղեղավտանգ տեղամասերում: Արդյունքում՝ գարնանային վարարումների ժամանակ ոչ միայն կանխվել են վերոհիշյալ հատվածներում գետերի ու հեղեղատարների ափերի և ափապաշտպան արգելաթմբերի քայքայումն ու փլուզումը, այլև առափնյա տարածքները՝ բնական և ագրոլանդշաֆտները:

- Ագրոլանդշաֆտների բարելավման ուղղված միջոցառումների շրջանակներում իրականացված աշխատանքների շնորհիվ հաջողվել է զգալիորեն կրճատել չօգտագործվող հողատարածքները: 2011 թվականից չօգտագործվող վարելահողերը հացահատիկային և կերային մշակաբույսերի արտադրության զարգացման նպատակով սկսել են ընդգրկվել գյուղատնտեսական շրջանառության մեջ, որի արդյունքում մշակվող ցանքատարածությունները 2014 թվականին կազմել են 332699 հա (74,2%): Այսպիսով, վերջին տարիներին մշակովի ցանքատարածություններն ավելացել են շուրջ 49 000 հեկտարով:

8. ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը լանդշաֆտային ռազմավարության իրագործմանն ուղղված միջոցառումներով ամրագրված 2.4 կետի կատարման վերաբերյալ հայտնում է, որ նախարարությունն արդյունաբերական զարգացման և ներդրումային քաղաքականությունների շրջանակներում իրականացվող մի շարք ոլորտային և ներդրումային ծրագրերի ներքո շեշտադրում է ՀՀ տարածքներում առկա չիրացված ներուժի և արտադրական ենթակառուցվածքների արդիականացման և գործարկման հնարավորությունների օգտագործումը: Ի լրումն, 2014 թվականի նոյեմբերի 19-ին ընդունված «Արդյունաբերական քաղաքականության մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև ՀՀ կառավարության 2015 թվականի N618-Ն որոշմամբ հաստատված արդյունաբերական գոտիների կազմակերպման կարգով նախատեսվում է արդյունաբերական գոտիների ստեղծում: Ներկայումս ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացվում են Հայաստանի Հանրապետությունում առկա չօգտագործվող արտադրական տարածքների գույքագրում, որը հնարավորություն կտա պոտենցիալ

ներդրումների առկայության պարագայում ներդրողներին առաջարկել կոնկրետ արտադրական տարածքներ՝ ներկայացնելով դրանց առկա հնարավորությունները:

9. Երևանի քաղաքապետարանից ստացված տեղեկատվության համաձայն, Երևան քաղաքում բարենպաստ, հարմարավետ կենսամիջավայր ստեղծելու նպատակով 2015 թվականին իրականացվել են մի շարք դեկորատիվ և բնապահպանական նշանակություն ունեցող կանաչապատման միջոցառումներ, որոնց արդյունքում բարեկարգվել են քաղաքում արհեստական լանդշաֆտների տեսանելի, գեղագիտական և որակական հատկանիշները: Այդ թվում՝

- նոր այգիների, զբոսայգիների հիմնադրում և վերականգնում՝ Շենգավիթ (3.1 հա) և Նոր Նորք (5.64 հա) վարչական շրջաններում, բացի այդ ավարտվել են 4 խորքային հորերի ստեղծման աշխատանքները Ավան, Նոր Նորք և Շենգավիթ վարչական շրջանների ոռոգման ջրի քանակության 40-60%-ը և ոռոգելու շուրջ 65 հա տարածք:
- ոռոգման ցանցի ընդլայնում և վերանորոգում՝ 12 կմ
- ծառերի կրապատման աշխատանքներ՝ շուրջ 36000 ծառ
- ծաղկային տարածքների ավելացում՝ 7.2 հա
- ծաղկասացիլների և վարդակակաչների ներկրում, տնկում՝ 2.500 000 հատ
- վարդակակաչների սոխուկների ներկրում և տնկում՝ 750 000 հատ
- նոր սիզամարգի ստեղծում Սիլիկյան թաղամասում՝ 0.65 հա
- սիզամարգերի բարելավում՝ 12 հա:
- Մայրաքաղաքում մասնագետների վերահսկողությամբ իրականացվել են 14000 հատ ծառերի էտման աշխատանքներ, որոնք համապատասխանում են ագրոկանոնների բոլոր պահանջներին: Նշված միջոցառումները, ծառերի բուժման հետ համատեղ, հնարավորություն տվեցին զգալի նվազեցնել ծառերի վնասատուների քանակը: Մայիս և հունիս ամիսներին բուժման են ենթարկվել 17000 հատ ծառեր: Ընդհանուր առմամբ իրականացվել է ծառերի խնամքի և բուժման աշխատանքների 80 տոկոսը:
- Գարնանային ծառատունկի ընթացքում մայրաքաղաքում տնկվել է 40000 հատ ծառ և թուփ:
- Երևան քաղաքի Սիլիկյան թաղամասում ստեղծվել է նոր բուֆերային գոտի՝ անցկացվել է շուրջ 1.5 կմ ոռոգման ցանց և այս աշնանը տնկվել են սոսիներ: Արգավանդի կամուրջի հարակից տարածքում տնկվել են 1500 ակացիա: Մոտենում են ավարտին Ա.Կարապետյանի անվան պուրակի վերակառուցման շխատանքները:
- 2015 թվականի ընթացքում իրականացվել են Ծիծեռնակաբերդի, Եռաբլուրի, Փարոսի անտառ-պուրակի կանաչ տարածքների վերականգնման, խնամքի լայնածավալ աշխատանքներ, ինչպես նաև բուսաբանական և կենդանաբանական այգիների կանաչապատման և խնամքի աշխատանքներ: